



Լրատու Newsletter

ԳԵՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Դեկտեմբեր 2019
Լրատու թիվ 17

Ողջոյնի Խօսք



ԱՆԻ

Սեպտեմբերի 8-ին մեկնարկեց վարժարանի 2019-2020 ուսումնական տարին, որին թե՛ աշակերտներն ու ծնողները և թե՛ ուսուցչուհիներն ու հոգաբարձուները մեծ խանդավառությամբ և ոգևորությամբ էին սպասում:

Շնորհաւորում եմ բոլոր աշակերտներին, ծնողներին, հոգաբարձուներին նոր ուսումնական տարւայ առթիւ, ցանկանում եմ որ այս տարի լինի հետաքրքիր, բովանդակալից ու յաջողութիւններով լի:

Այս տարի վարժարանում տեղի են ունեցել որոշ փոփոխութիւններ. Ծնողական յանձնախմբի ատենապետուհի տիկ Սևանա Ղարախանեանը և հոգաբարձուներ տիկին Այլին Դարբինեանն ու տիկին Լարա Վերդեանը ընտանեկան և աշխատանքային զբաղւածութեան պատճառով հրաժարեցին իրենց պարտականութիւններից, սակայն նրանք նշեցին, որ մեծ սիրով օգտակար կլինեն վարժարանի աշխատանքներին: Ծնողական յանձնախմբի ատենապետուհի ընտրեց տիկին Անի Անդրեասեանը: Յաջողութիւն մաղթենք նորընտիր ատենապետուհուն:

Հոկտեմբերի 13-ին տեղի ունեցաւ ծնողական ընդհանուր ժողովը, որի ընթացքում տիկ Սիլվա Դիլանչեանն ընտրեց վարժարանի հոգաբարձու, իսկ վարժարանի խնամակալութիւնը պարոն Հայկ Արմաղանեանին ընտրեց որպէս հոգաբարձու: Երկու հոգաբարձուներն էլ մեծ խանդավառութեամբ միացան հոգաբարձուների խմբին:

Մաղթենք նորընտիր հոգաբարձուներին յաջողութիւն:

Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս ամսագրի պատախանատուներին՝


Տիկին Լենա Գիւլխանճեանին
Տիկին Գայիանէ Յակոբեանին
Տիկին Այիդա Եղիկեանին
Օրիորդ Վանուհի Պետրոսեանին

Սիրելի աշակերտներ և ուսուցիչներ, յարգելի ծնողներ շնորհաւորելով Ամանորի և Սուրբ Ծննդի առթիւ մաղթում եմ բոլորիդ և Ձեր ընտանիքներին քաջառողջութիւն, յաջողութիւն, անձնական երջանկութիւն և թող իրականութիւն դառնան Ձեր բոլորի նպատակներն ու երազանքները: Թող 2020 թուականը մեր հայրենիքի և աշխարհի համար լինի խաղաղութեան և առաջընթացի տարի:

2020թ յունուարի 12-ին կը վերսկսեն վարժարանի երկրորդ եռամսեակի աշխատանքները

Վարժարանի տնօրինուհի՝
Ռուզաննա Թաթուլեան

**Շնորհաւոր Նոր Տարի
և
Սուրբ Ծնունդ**





Վերամուտ

Ողջույն դպրոց մեր սիրելի...

Ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ և մեծ սպասելիքներով առաջին անգամ դպրոց ոտք դրած սիրելի փոքրիկներ:

Կրկին եկավ սեպտեմբերն իր հետ բերելով գիտելիքի ուրախ տոնը: Այս տոնն իր հետ բերում է բարություն, ուրախություն և հավատ ապագայի նկատմամբ: Այսօր բոլորիս համակել է անասելի մի հուզմունք: Մեր սիրելի դպրոցն իր գիրկն է առել նոր աշակերտների, լցվել նրանց զրգուն ծիծաղով և ուրախությամբ:

Այսօր նոր ուսումնական տարվա սկիզբն է, եկել է նոր ու հետաքրքիր հանդիպումների ժամանակը: Կարծես անսովոր ոչինչ չկա առաջին զանգ արտահայտության մեջ, որն այնքան հին է այնքան էլ նոր: Սակայն ուսումնական տարվա սկիզբն ազդարարող զանգի առաջին իսկ հնչյունները խորը արձագանք են թողնում նրա յուրաքանչյուր դողանջի հետ, թրթռում են հազարավոր սրտեր:

Լինեն առաջին, թե ավարտական դասարանցիներ, թե ծնողներ, որոնք վաղուց են ավարտել դպրոցը, սեպտեմբերյան առաջին օրը կանչում է առաջ դեպի գիտության բարձրունքներ նվաճելու մի նոր աշխարհ՝ խորհրդավոր, հրապուրիչ ու անչափ գեղեցիկ, որն ունի մեկ անուն << Գիտելիքի աշխարհ >>:

Մենք ուրախ ու պայծառ տրամադրություն ենք մաղթում նրանց, ովքեր առաջին անգամ են ոտք դնում այս զարմանահրաշ մոլորակը: Հաջողություն ենք մաղթում մեր ուսուցչական կազմին նոր ուսումնական տարվա կապակցությամբ, ովքեր իրենց ամբասիր աշխատանքով և մեծ նվիրումով սատարում են հայապահպան գործին: Թող երբեք չմարի իրենց առաքելությունը կատարելու ցանկությունը:



Welcome to our beloved school.

Teachers, parents, pupils, and beloved little ones who set foot in school for the first time.

September came again, bringing with it a joyous day of knowledge. This holiday brings kindness, joy, and faith in the future. All of us today have an unbelievable thrill. Our beloved school has embraced new students, filled their hearts with laughter and joy.

Today is the beginning of the new school year, the time for new and exciting meetings. There seems to be nothing unusual about the first bell that is so old and yet so new. But the very first sounds of the bell ringing in the beginning of the school year leave a deep echo which vibrates thousands of hearts.

Be they first timers, graduates, or parents who have long since graduated, the first day of September calls for reaching new heights of learning and conquering a new world of knowledge: mysterious, alluring, and beautiful.

Our best wishes to those who set foot on this marvellous planet for the first time. On the occasion of the new academic year we wish infinite success to our teachers who support the preservation of the Armenian identity through their diligent work and dedication. Let them never fail to fulfil their mission.



Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:





Տեր Շնորհք Բաղդասարեանի Այցելությունը

Հոկտեմբեր 13-ին Տեր Շնորհք Բաղդասարեանն այցելեց վարժարան: Առաւօտեան <Տէրունական աղօթք>-ից յետոյ, Տեր Հայրը երեխաներին բացատրեց Սուրբ Թարգմանչաց տօնի խորհուրդն ու նշանակութիւնը:

Նոյն օրը վարժարանում նշեց Երևանի հիմնադրման 2801 ամեակը: Աշակերտները մեծ ոգևորութեամբ երգեցին Էրեբունի Երևան երգը: Տեր Շնորհքը հանդիպեց վարժարանի հոգաբարձուների և ծնողների հետ, պատասխանելով նրանց հետաքրքրող հարցերին:

On October 13, Fr Shnork Baghdassarian attended the School to convey his blessings to all. After the morning prayer, he discussed with the pupils the meaning and significance of the Feast of the Holy Translators.

He also mentioned the 2801st anniversary of the foundation of Yerevan and in celebration; everyone sang the song of Yerevan Erebuni. Before leaving, Fr Shnork Baghdassarian met with some parents and governors to discuss topics that are of interest to them.



Ծնողական Ընդհանուր Ժողով



Հոկտեմբերի 13-ին տեղի ունեցաւ Վարժարանի ծնողական ընդհանուր ժողովը: Վարժարանի հոգաբարձուների ատենապետ պարոն Արենուշ Իսկանդարին բարի գալուստ մաղթեց ներկայներին: Խնամակալութեան ատենապետ, Դկտ Գառնիկ Թարվերդին փոխանցեց խնամակալութեանը խօսքը և ընթերցեց նախորդ ժողովի ատենագրութիւնը, որի հաստատումից յետոյ, վարժարանի տնօրինուհի տիկին Ռուզաննա Թաթուլեանը ներկայացրեց վարժարանի կրթական ծրագրերը և վիճակը: Վարժարանի հաշւապահ պրն Կարօ Կարաբեկեանը ներկայացրեց 2018-2019 ուսումնական տարւայ վարժարանի ֆինանսական հաշւետւութիւնը: Ծնողական յանձնախմբի ատենապետուհի տիկին Անի Անդեասեանը ներկայներին բացատրեց վարժարանի համար ծնողական յանձնախմբի դերն ու նշանակութիւնը: Նա հորդորեց ծնողներին միանալ ծնողական յանձնախմբին:

Վարժարանի Հոգաբարձուների ատենապետ պրն Արենուշ Իսկանդարին ներկայացրեց այն, որ հոգաբարձուներ տիկ Այլին Դարբինեանն ու տիկ Լարա Վերդեանը ընտանեկան և աշխատանքային զբաղւածութեան պատճառով երկու տարի որպէս հոգաբարձու աշխատելուց յետոյ չեն ցանկացել շարունակել իրենց պարտականութիւնները, սակայն նրանք մեծ սիրով օգտակար կլինեն վարժարանի աշխատանքներին: Ժողովում Տիկին Սիլվա Դիլանչեանն ընտրեց որպէս հոգաբարձու: Ժողովին ներկայ ծնողները վարժարանի աշխատանքների վերաբերեալ արեցին բազմաթիւ օգտակար առաջարկութիւններ: Հոգաբարձուները և տնօրինուհին պատասխանեցին ծնողներին հետաքրքրող հարցերին: Ժողովն անցաւ շատ հետաքրքիր և կառուցողական միջավայրում:

Ծնողական Ընդհանուր Ժողով – Parents' AGM

The AGM of parents took place on October 13th. Chairman of the governors Mr Arenoush Eskendari welcomed all and then chairman of the Trust Dr Tarverdi, read the minutes from the previous year's meeting then the headteacher, Mrs R. Tatulian discussed the school's structure and curriculum. Governor and treasurer, Mr Garo Karabekian, presented the 2018-19 accounts.

Afterwards, Mrs Ani Antyasian explained the pivotal role that the Parents' Committee plays in raising funds to support the school and encouraged parents to join the committee.

The chairman then announced that after completing a two year term, Mrs Ailin Tarbinian and Mrs Lara Verdian have decided not to continue their duties as governors due to family and work engagements but will carry on supporting the school's activities. Consequently, Mrs Silva Dilanchian was elected governor. The governors then answered questions raised by the parents.



Թարգմանչաց Տօն



Գեորգ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանում տարիներ շարունակ գեղեցիկ ասանդոյթ է դարձել հոկտեմբերին կազմակերպել հանդես նւիրած Սրբոց Թարգմանչաց և Հայ մշակոյթի տօնի առթիւ:

Այս տարի այդ տօնակատարութիւնը տեղի ունեցաւ հոկտեմբերի 20-ին; Հանդիսութեան սկզբում օրւայ խորհուրդն ու նշանակութիւնը բացատրեց տիկ . Արմինէ Սարգսեանը: Նա յատուկ մէջբերեց Վիկտոր Համբարձումեանի թողած կտակը իրեն յաջորդող սերունդներին:

"Ինձ յաջորդող սերունդներին, թոռներիս, ծոռներիս կտակում եմ տիրապետել հայոց լեզւին: Ամէն մէկը պէտք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերէնից, անկախ այն բանից, թէ քանի տոկոս է նրա մէջ հայկական արիւնը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում: Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թէ արիւն, այլ գաղափարներ եւ գաղափարների մէջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է:"

Բարձր դասարանների աշակերտները ներկայացրին Հայոց գրերի գիտի և թարգմանիչների կատարած աշխատանքների դերն ու նշանակութիւնը հայ ինքնութեան և մշակոյթի պահպանման գործում:



Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ



Թարգմանչաց Տօն – Holy Translators' Day

Հանդեսը շարունակեց աշակերտների արտասանություններով, որոնք նվիրած էին Սուրբ Մեսրոպ Մաշտոցին, Թարգմանիչներին և մեր նախահայրերին:

Այնուհետև գեղեցիկ երգերով ելույթ ունեցաւ երգչախումբը տիկին Լիդիա Ղազարեանցի, տիկ Վիոլէթ Ղարիբեանի ղեկավարութեամբ և տիկին Էլլա Բաբայեանի նազակցութեամբ:

Հանդեսին ներկայ էր Համայնքի հոգևոր առաջնորդը՝ Գերաշնորհ Սրբազան Հայր Մանուկեանը:

Հանդեսի աւարտին Սրբազան Հայր Մանուկեանը փոխանցելով իր խօսքը օրայ առթիւ, օրհնեց Վարժարանը, աշակերտներին, ուսուցիչներին և ծնողներին:



As per tradition, on October 20th, the school celebrated our language and the Holy Translators' Day. At the beginning Mrs Armine Sargsyan explained the meaning and significance of the day. She cited Victor Hambardzoumian's will to his succeeding generations. Pupils of all ages participated in a special assembly dedicated to Mesrob Mashtots' creation of the Armenian Alphabet, the translators and our literary predecessors. The pupils sang and recited poems in celebration of the Armenian culture.

The spiritual leader of the community, His Grace Bishop Manoogian, was present at the event. At the end of the event, he delivered his word on the day and blessed the school, its students, teachers and parents.

Ամանորի Հանդես – Christmas Celebration



Նոր Տարվա հանդեսը Գ. Թահթայան վարժարանի ամենահաճելի հանդեսներից մեկն է: Այս տարի հանդեսը տեղի ունեցավ դեկտեմբերի 8-ին: Հանդեսը սկսվելուց առաջ սրահում կար տոնավաճառ, որի ընթացքում հյուրերը համտեսեցին տոնական համեղ ճաշատեսակներ: Տոնավաճառը կազմակերպել էին Ծնողական Ցանձնախմբի անդամներն և հոգաբարձուները:

Հանդեսի սկզբում տիկ. Ռ. Թաթուլեանը շնորհավորեց բոլորին Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ և խորին շնորհակալություն հայտնեց Ծնողական Ցանձնախմբի անդամներին, հոգաբարձուներին և բոլոր բարերարներին իրենց բարի ու հայրենանվեր գործով միշտ դպրոցին աջակից լինելու համար:

Ինչպես միշտ Ձմեռ Պապիկի այցը մեծ աշխուժություն պարգևեց բոլորին: Բովանդակալից հանդեսի ընթացքում աշակերտները ներկայացրին գեղեցիկ բանաստեղծություններ, երգեր, պարեր և բեմադրություններ, որից հետո ստացան իրենց հասանելիք Ձմեռ Պապիկի նվերները: Հանդեսը վարեց վարժարանի ուցուցչուհի օր. Վանուհի Պետրոսյանը:



The most exciting school event is the Christmas celebration as a visit from Santa is expected. This year this event took place on the 8th December.

Prior to the Christmas performances in the main hall, the canteen was filled with festive spirit; parents, guests and children were enjoying the Christmas Bazaar and the delicious food prepared by the Parents' Association.

At 1.30 p.m., the Children welcomed Santa Clause with festive songs and then danced, sang, recited poems and performed for him. In appreciation, Santa gave presents to all the children.

The headteacher, Mrs Ruzanna Tatulian, thanked everybody who supported this event as well as all the school's teachers, benefactors and friends for always supporting the school. She also wished everyone a very happy, healthy New Year and a Merry Christmas.







2019-2020 Տարեշրջան

Առաջին եռամսեակ 8 Սեպտ. 2019 – 15 Դեկտ. 2019 Term I 8 September 2019 – 15 December 2019	
8 Սեպտեմբեր 8 September	Վերամուտ Back to school
13 Հոկտեմբեր 13 October	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
20 Հոկտեմբեր 20 October	Մշակույթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
27 Հոկտեմբեր 27 October	Արձակուրդ Half-Term Break
8 Դեկտեմբեր 8 December	Նոր Տարուայ Հանդես New Year's Celebration
15 Դեկտեմբեր 16 December	Եռամսեակի վերջին օրը Last Day of Term
Երկրորդ եռամսեակ 12 Յունուար 2020 – 29 Մարտ 2020 Term II 12 January 2020 – 29 March 2020	
8 Փետրուար 8 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
16 Փետրուար 16 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
23 Փետրուար 23 February	Արձակուրդ Half-Term Break
22 Մարտ 22 March	Մայրերու Օր Mothers' Day
29 Մարտ 29 March	Զատիկուայ Հանդես Easter Celebration
Երրորդ եռամսեակ 19 Ապրիլ 2020 – 5 Յուլիս 2020 Term III 19 April 2020 – 5 July 2020	
10 Մայիս 10 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
24 Մայիս 24 May	Մարզական Օր Sports' Day
21 Յունիս 21 June	Դաշտահանդես School BBQ
5 Յուլիս 5 July	Ամավերջի Հանդես End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան, Տիկ Այիդա Եղիկեան,
Օրդ Վանուհի Պետրոսյան, Տիկին Գայիանե Յակոբեանին
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերեն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլիսանճեան